ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2026թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» հ.463-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2016թ. հ.15062016-01-0145 վկայական) Եղ.Թադևոսյանի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող ընդհանուր 1030.59քմ մակերեսով (հասարակական շինություններ՝ 856.94քմ և 147.39քմ, ծածկ՝ 26.26քմ) շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2029 թվականի հոկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Եղ.Թադևոսյանի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող ընդհանուր 1030.59քմ մակերեսով /հասարակական շինություններ՝ 856.94քմ և 147.39քմ, ծածկ՝ 26.26քմ/ շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2029 թվականի հոկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Եղ.Թադևոսյանի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող գույքը (հասարակական շինություններ՝ 856.94քմ և 147.39քմ, ծածկ՝ 26.26քմ, հողամաս՝ 765.7քմ) համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.06.2016թ. հ.15062016-01-0145 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 13.09.2016թ. հ.579-Ա և Երևանի քաղաքապետի 14.09.2016թ. հ.3240-Ա որոշումների հիման վրա, Եղ.Թադևոսյան փողոցի հ.2/1 հասցեում գտնվող ընդհանուր 1030.59քմ մակերեսով /հասարակական շինություններ՝ 856.94քմ և 147.39քմ, ծածկ՝ 26.26քմ/ շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 765.7քմ մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով 3 տարի ժամկետով տրամադրվել է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը: Որոշումների հիման վրա 23.09.2016թ. կնքվել է գույքի անհատույց օգտագործման հ.2433 պայմանագիրը:

Երևան քաղաքի ավագանու 09.02.2021թ. հ.332-Ա և Երևանի քաղաքապետի 18.02.2021թ. հ.318-Ա որոշումների հիման վրա 18.05.2021թ. կնքված հ.1731 համաձայնագրով գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 10.02.2024թ. (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24052021-01-0171 վկայական):

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը առողջապահական ծառայություններ է մատուցում բազմաթիվ միայնակ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, ապաստան հայցողների և այլ սոցիալապես անապահով և խոցելի ընտանիքների: Կազմակերպությունը ներդրել և զարգացրել է սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման տարբեր ենթակառուցվածքներ՝ ցերեկային կենտրոններ, բարեգործական ճաշարաններ, ուսումնական կենտրոններ, սոցիալական տուն, որոնք հնարավորություն են ընձեռնում շահառուներին բազմաբնույթ սոցիալ-առողջապահական ծառայություններ ստանալ ոչ միայն համայնքներում, այլ նաև իրենց տներում:

Քննարկվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Մայր Հայաստան», «Հանրապետություն» և «Հանրային ձայն» խմբակցությունները առարկություններ չեն ներկայացրել և տվել են դրական դիրքորոշում:

Ելնելով վերը շարադրվածից և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ